Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Ф-19

ԲԱՐԵՊԱՇՏՆԵՐԸ

(ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՅՑ)

АЛЕКСАНДРОПОЛЬСКАЯ ГОР.
№ 1552
БИБЛІОТЕКА-ЧИТАЛЬНЯ.

ԳՐԵՑ

ԽԱՉԱՏՈՒՐ ՔԱՀ. ՓԱՆԵԱՆՑ

(Արտատպած «Նոր-Դար» լրագրից)

ԹԻՓԼԻՍ
Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի
Միքայէլեան փողոց № 81
1901

2007
32741
սահ. Ֆ-217

27.08.2013

59.655

Дозволено Ценз. Тифлисъ 7 Іюля 1901 года.

ԲԱՐԵՊԱՇՏՆԵՐԸ

(ԵՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՅՑ)

Ա

Հեռու արևելքում՝ մի քաղաքի կեդրոնում կանգնած էր մի հոյակապ ապարանք։ Ապարանքին կից ձգուած էր մի եղեմական պարտէզ։ Պարտէզը լի էր ամեն տեսակ ծառերով ու ծաղիկներով։ Ծաղկանց թագուհի վարդը տարուայ իւրաքանչիւր ամսում բացուելով՝ իւր ախորժահոտ բուրմունքը միախառնում էր միւս հոտաւէտ ծաղկանց բուրմունքի հետ և պարտէզը լցնում մի երկնային անուշահոտութեամբ։ Մշտադալար ուռենին ու բարձրակատար բարդենին դիւթում, գրաւում էին անցորդի քաղցր ուշադրութիւնը։ Վարդի սիրահար սոխակն առաւօտից մինչև երեկոյ իւր սիրեկան վարդի գովքն էր երգում, նրան էր նուիրում իւր սրտի խորքում պահած ամենանուիրական տաղերը, նրան էր ձօնում իւր քաղցրիկ դայլայլիկները։ Նրա բացուելուն համար այնքան սուլում, ծըլ-

ելլում, կկլլացնում էր, որ ուժասպառ լինելով՝ յոգնում, լռում էր։

Բայց պարտիզի ամենագլխաւոր հրաշալիքը կազմում էր մի հիանալի շատրուան. ջուրը իւր երփներանգ գոյներով ցայտում էր վեր և, որպէս անձրևի կաթիլներ, բիւրեղանման թափւում շուրջը շինուած մարմարեայ աւազանի մէջ։ Հրաշալի էր շատրուանը՝ մանաւանդ գարնանային գեղեցիկ առաւօտներին։ Մերթ պատկերանում էր որպէս գեղեցիկ արևանման հեղեղ, մերթ ցայտում էր որդան կարմրի գոյնով, մերթ՝ ջինջ երկնակամարի կապոյտ երանգն էր ստանում, մերթ շողշողում էր փառահեղ ծիրանի գոյնով և մերթ խաղում էր որպէս կատարեալ ծիածան իւր ամբողջ գոյներով։

Ահա այդ բազմերանգ շատրուանի ցոլքերից կազմուած մարմարեայ աւազանում ամեն առաւօտ ու երեկոյ լողանում էր պարտիզի յաւերժահարս-թագուհին։ Այդ շքնաղ կոյսն ապարանքի տէր հարուստ վաճառականի դուստր էր։ Գեղեցիկ, շատ գեղեցիկ էր Նազլու խանումը։ Նա բոլորել էր արդէն 22 տարին։ Բարձրահասակ էր նա, որպէս պարտիզի բարդենին, մըշտադալար ու թարմ՝ որպէս ուռենին։ Մէջքը բարակ, կուրծքը լայն, աչքերը ծով, յօնքերը կամար, մազերը խիտ, սև սաթի պէս, որոնք

փռւում, տարածւում էին մինչև տատրականման ոտների սրունքները։ Հրաշագեղ էր Նազլու խանումը։

Երբ նա իջնում էր պարտէզ լողանալու համար, անուշահոտ ծաղիկներն աւելի ծաղկում փթթում էին. շատրուանն աւելի ևս բարձր ու բարձր էր ցայտում իւր երանգ երանգ շիթերը. վարդն ու սոխակը միմեանց սիրով ողևորուած՝ երգեցիկ թռչունների հետ սկսում էին նրա գովքը երգել, իսկ մարմարեայ աւազանն աւելի լայն էր բաց անում իւր կուրծքը շքնաղատես կոյսին ընդգրկելու, նրանից քաղցրիկ համբոյրներ առնելու։ Սիրում էր Նազլուն պարտէզը, բայց աւելի ևս վարդն ու սոխակը։

Հայրական ապարանքին կից, դէպի արևելք, ուր գտնւում էր պարտէզը, կառուցուած էր Նազլուի առանձնարանը։ Հայրն ու մայրը, և առհասարակ ընտանիքի իւրաքանչիւր անդամը, միայն որոշեալ ժամերին կարող էին տեսակցուել Նազլուի հետ։ Այդպէս էր պատուիրել Նազլու խանումը, որպէս զի չվրդովեն իւր խաղաղ սիրտն ու հոգին, որ ըստ երևոյթին, տուած էր միայն Աստծուն։

Առաւօտ էր. օրուայ տեսակցութեան ժամը մօտեցել էր։ Նազլուի սանդուխտներով յամրաքայլ բարձրանում էր նրա հայրը։ Այդ մար-

դը, որ իւր դստեր արտաքին գեղեցկութեան հակապատկերն էր ներկայացնում, մի շատ բարի ու առաքինի մարդ էր հռչակուած։ Նրա քայլելու եղանակից կարելի էր դուշակել, որ բաւական մտախոհ էր նա. կարծես մտմտում լինէր, թէ ինչպէս պէտք է բացէր իւր սիրտը իւր դստեր առաջ։

Ահա նա մօտեցաւ դռանը, կամացուկ կիսաբաց արաւ և... նրա աչքի առաջ պատկերացաւ հետևեալ տեսարանը։ Նազլուն ծնկաչոք, գլուխը խոնարհած դէպի ձախ ուսը, մազերը սանձարձակ թափուած ուսերի վրայ, աչքերը սևեռած առաստաղին—դէպի երկինք, երկու ձեռքը համաչափ դէպի վեր պարզած՝ աղօթում էր Աստծուն։ Այդ դրութեան մէջ Նազլուն էլ աւելի հրաշագեղ էր, էլ աւելի շքեղ։ Մերթ ծնրադրում էր, մերթ լսելի ձայնով աղօթք մրմնջում, և մերթ արտասուքի բիւրեղանման կաթիլները նրա ծոփանման աչքերից վարդագոյն այտերի վրայով հոսելով՝ թափւում էին կուրծքի վրայ։ Պահ մի սպասելուց յետոյ՝ հայրը բոլորովին բաց արաւ դուռը և մտաւ դստեր սենեակը։ Նազլուն իւր ոտերի ձայնից սթափուելով՝ աչքերը դարձրեց այն կողմ և նկատելով իւր հօրը՝ խկոյն ոտքի կանգնեց, մօտեցաւ նրան և քնքշաբար բռնելով նրա ձեռը՝ մօտեցրեց իւր շրթունքներին և քաղցր համբոյր դրոշմեց վրան։

—Զաւակս, ես դարձեալ նոյն նպատակով եկած եմ մօտդ։ Այն երիտասարդն ինձ հանգստութիւն չի տալիս իւր անընդհատ թախանձանքներով։ Արի, զաւակս, լսիր հօրդ խորհուրդը, տուր համաձայնութիւնդ և եղիր նրա ամուսինը։ Նա շատ գեղեցիկ երիտասարդ է, ինձնից աւելի հարուստ, և որ գլխաւորն է՝ համեստ, բարեբարոյ և առաքինի տղայ է։ Շատ յարմար զոյգ էր, կարծես մէկը միւսի համար չափուած, ձևուած։ Ես վստահ եմ, որ երկուսդ ամուսնանալով՝ ձեր պալատը դրախտ կը դարձնէք, և երջանկութիւնն ու Աստուծոյ օրհնութիւնն անպակաս պիտի լինին ձեզնից, եթէ հաւատարմութեամբ, փոխադարձ զիջողութեամբ և հնազանդութեամբ կրէք ձեր ամուսնական լուծը։

—Հայր, սիրելի հայր, ինչպէս միշտ, այժմ էլ խնդրում եմ, մի խօսիր այդ հարցի մասին։ Ես ուխտել եմ չամուսնանալ երբէք. իմ սիրտն ու հոգին միայն Աստուծուս եմ տուել. մեղաց հացին ամենևին չեմ ախորժում։ Մինթէ ըեզ հաճելի կըլինի, որ այսքան տարուայ իմ աղօթքը, իմ սրբացած կեանքը, իմ արդարութիւնը ոտի տակ տալով՝ ինձ կապեմ մեղանչական

կեանքի հետ. և այդ ինչու համար։ Փառք Աստուծոյ, Նա քեզ համար բարիք շնորհել է, և ես քո շնորհիւ նիւթական ոչ մի կարօտութիւն դեռ չեմ զգացել։ Թող՝ որ ես իմ բարոյական և հոգեկան պարտքս կատարեմ։ Հայր, աղօթք աղօթք և դարձեալ աղօթք... աղօթել հարկ է միշտ, անընդհատ աղօթել. առանց ձանձրանալու աղօթել, որպէս զի սրբուինք, որպէս զի արդարանանք՝ Աստուծոյ արքայութիւնը ժառանգելու համար.—Բայց տեսնում եմ, որ արդէն նեղսրտում ես. թող քո կամքը լինի։ Զիջանելով թախանձանացդ՝ խոնարհութեամբ ընդունում եմ առաջարկութիւնդ միայն պայմանով՝ որ նա այսպիսի մի առանձնարան չինէ ինձ համար իւր պարտէզով, իւր բոլոր յարմարութիւններով ու պարագաներով, որ որոշեալ ժամերին տեղի ունենայ ընտանեկան տեսակցութիւնները, որ ես դարձեալ ազատ լինեմ աղօթքիս յետևից լինելու, որ ոչ ոք իրաւունք չունենայ խանգարել ինձ միայնակութեանս ժամերում...

Հայրն ուրախացած՝ հեռանում է աղջկայ մօտից և եղելութիւնը հաղորդում փեսային։ Իւրաքանչիւր պայման ուրախութեամբ ընդունում է։

Հազիւ հայրը դուրս գնաց թէ չէ, ահա

արևելեան դռնից, որ տանում էր դէպի պարտէզը, երկչոտ քայլերով, աջ ու ձախ անընդհատ նայելով՝ Նազլուի առանձնարանը մտաւ մի լայնաթիկունք խարտեաշ երիտասարդ... Եւ ահա բացւում է նոր տեսարան։ Նազլուն նըստած է երիտասարդի մօտ ծունկ ծնկան. բամբականման կուրծքը կիսով չափ բաց՝ նա իւր նազենի գլուխը դրել էր երիտասարդի կուրծքին... Բայց ահա նրա հոլանի թևերը տարածուեցաւ օդում և երկուսը գրկախառնուեցան իրար... Անընդհատ տեղացող սիրատոչոր համբոյրները, որ դրոշմւում էին Նազլուի նուրբ ու նռնանման շրթունքներին, կարմիր այտերին, նրան ինքնամոռացութեան մէջ էին գցել... Ո՞րպիսի սիրախօսութիւններ։ Այն աղօթասէր Նազլուն, այն երկիւղած բարեպաշտուհին միանգամայն հակապատկեր դրութիւն էր ներկայացնում, —մի կատարելագործուած փարիսեցի, որ իւր արտաքին կեղծ ու պատիր արարողութիւններով, զանազան բարեպաշտական ցոյցերով խաբում էր հօրը և շլացնում ամբոխին, որը Նազլուի աղօթքի, նրա ճգնաւորական կեանքի մասին շատ էր լսած և նրան իսկական բարեպաշտուհի համարելով՝ սրբացրել էր նրան։ Ամբոխին գրաւել, գիւթել էին նրա արտաքին

բարեպաշտական ձևերը, իսկ նրա ներքին աշխարհին տեղեակ չէր ոչ ոք...։

Բ

Բարեպաշտուհու քաղաքից 30 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող մի այլ քաղաքի ծայրին տենդային արագութեամբ մի նոր շինութիւն էր կառուցանուում։ Բարեպաշտ հարստացուի նոր ապարանքն էր այդ. նոյն ձևով, նոյն ճաշակով և նոյն յատակագծով, որպիսին հայրական տունն է։ Ապարանքին կից գտնուում է նրա առանձնարանը, որի դուռը դարձեալ բացուում է դէպի պարտէզը. նոյն շատրուանը, նոյն մարմարեայ աւազանը, նոյն ուռենիներն ու բարտիները, նոյն ծաղիկները, բայց աւելի թարմ, աւելի մատաղ և աւելի կուսական։

Վերջապէս տեղի ունեցաւ ցանկալի բոպէն։ Նրանք արդէն ամուսնացած են։ Ըստ երևոյթին՝ երջանիկ զուգաւորութիւն։ Այր ամուսինը իւր հոգու բոլոր զօրութեամբ սիրում էր իւր բարեպաշտ կնոջը։ Իւր սիրտն ու հոգին, իւր հարստութիւնն ու փառքը նուիրած էր իւր գեղեցիկ Նազլուին։

Բարեպաշտ տիկին Նազլուն, ըստ սովորութեան, միայն որոշեալ ժամերին էր ընդու-

նում իւր մօտ ամուսնուն, նրա համար ընտանեկան այլ զուարճութիւններ չկային։ Միւս ժամերին նա փակուում էր իւր առանձնարան ապարանքն աղօթելու։ Քանի՞-քանի՞ անգամ այր ամուսինն ականատես էր եղել, թէ ինչպէս իւր բարեպաշտ Նազլու խանումը ծնկաչոք, արտասուքն աչքերին, ձեռքերը խաչած՝ աղօթում էր Աստծուն։ Ամուսնու սիրտը յցուում էր երկիւղածութեամբ, փառք էր տալիս Աստծուն, որ այնպիսի բարեպաշտ, աստուածասէր ու առաքինի կին ունի և էլ աւելի սկսում էր անսահման սիրով սիրել նրան։ Շուտով այդ քաղաքի հերոսուհին է դառնում բարեպաշտ Նազլուն։ Ամենքը նրան գովում են, նրանից պատկառում, ակնածում են. նրա հռչակը, որպէս բարեպաշտուհու, տարածուում է ամբողջ քաղաքում և շրջակայքում։ Բայց արևելեան դուռը... խարտեաշ երիտասարդը... սովորական այցելութիւնները... համբոյրները... դրանք ևս իրենց սովորական հերթին տեղի են ունենում...

Այսպէս անցնում է երեք տարի։ Եւ ահա քաղաքում խուլ կերպով տարածուում է մի ինչ որ չարագուշակ լուր, որ իբր բարեպաշտ Նազլուն անհաւատարիմ է դէպի իւր ամուսինը, որ նա հոմանիներ է պահում, որոնց հետ տեսակ-

ցութիւններ է անում աղօթքի պատրուակով ունեցած ժամերում։

—Բարեկամ,—ասաց մի անգամ բարեպաշտ Նազլուի ամուսնու մտերիմներից մինը, քեզ մի մեծ գաղտնիք պիտի հաղորդեմ, որ վերաբերում է քո ընտանեկան կեանքին։ Քո ամուսին Նազլուն սուտ բարեպաշտուհի է։ Նա սիրեկաններ ունի, նա քեզ խաբում է իւր աղօթքներով, իւր արտաքին ձևերով։ Ի հարկէ՝ անհաւատալի կը թուի քեզ, և տեսնում եմ արդէն, որ կասկածանքով ես վերաբերւում ասածներիս, բայց սխալւում ես։ Դու պատճառ չունիս կասկածելու, քանի որ իմ մտերմութիւնը քեզ յայտնի է. ասածս ճիշդ է. դու դիտես...։

Կարծես երկինքը փլեց խեղճ մարդու գլխին։ Կարծես շանթահար եղաւ նա։ Հաւատալ իւր ականջներին՝ դժուարանում էր նա։ Մթթէ... իւր բարեպաշտուհին... իւր աղօթասէր, իւր աստուածավախ կինը... Հոգեկան մի ներքին կռիւ բորբոքուել էր նրա սրտում։ Ձեռքերն ու շրթունքները մերթ սկսում էին դողդողալ, մերթ ինքն իրեն սկսում էր խօսել, մերթ բռունցքներն էր օդի մէջ խաղացնում...։

Այսպիսի մտատանջութեամբ նա անգիտակցաբար ու անզգայաբար գնում էր, մինչև

հասաւ մի դռան։ Եւ երբ դուռը բաց արաւ, այն ժամանակ միայն սթափուեցաւ նա։ Սթափուեցա՜ւ... Ցանկարծակի, անժամանակ անզգայաբար բացել էր կնոջ առանձնասենեակի դուռը... Իւր առաջ պատկերացած սոսկալի տեսարանից սարսափեց, երերաց, դողդողաց և քիչ էր մնացել ուշաթափ վայր ընկնէր... Մէկ էլ յանկարծ մի ահարկու ձայն դուրս թռաւ նրա բերանից և խելագարի պէս դուրս թռաւ սենեակից...։

Գ

Մայիսեան վերջին օրերից մէկն էր։ Արեգակը դեռ երկու ասպարէզ միայն բարձրացել էր։ Երևում էր, որ օրը բաւական շոգ պէտք է լինի, քանի որ օրուայ դեռ այդ ժամին տաքութիւնն արդէն խիստ զգալի էր։ Դաշտային պարապմունքների ամենաթունդ ժամանակն էր, և խառնիճաղանճ ամբոխն արդէն լցուել էր դաշտերը։

Այդ միջոցին՝ ճանապարհով անցնում էր մի մարդ մտամոլոր, մտախոհ ու ծանրաբայլ։ Երեսը դժգոյն՝ կարծես գերեզմանից վեր կացած մեռել լինէր, և այնքան տխուր, այնքան տրտում էր, որ նայողին սարսափ կարող էր

ազդել։ Երևում էր՝ որ մարդը հոգեկան զգալի տանջանքներ է կրել։

Գիշերից շատ անց էր արդէն, որ նա հասաւ մի անծանօթ քաղաք։ Քաղաքի մէջ լռութիւն էր տիրում. այդ նշան էր որ քնած էին ամենքը։ Միայն մէկը կար, որ չէր քնել։ Նա իւր անքուն աչքերով բարձրից դիտում էր քաղաքը և հսկում. այդ լրացած լուսինն էր, որ իւր արծաթափայլ լոյսը սփռել էր ամեն տեղ և քաղաքն այնպէս լուսաւորուած էր, որ թւում էր էր թէ ցերեկ լինի։

Անծանօթը շատ դէս ու դէն ընկաւ իջեւանելու մի տեղ գտնելու համար, բայց ճրագի աղօտ լոյս անգամ չկարողացաւ նշմարել ոչ մի տեղ։ Այդպէս էր արևելեան այդ քաղաքի սովորութիւնը։ Անց ու դարձն ընդհատուած էր, իսկ ինքը գիշերելու տեղ չունէր։ Ինչ անէր արդեօք, մնացել էր շուարած։ Վերջապէս կանգ առաւ երկու պատերի մէջ տեղում գտնուող մի փոքրիկ անկիւնի մօտ։

Ահա այստեղ մեր անծանօթը նստեց, մէջքը տուաւ պատին և կրծնելով՝ իւր կռնները բարձի տեղ ծառայեցնելով հանգստութիւն տուաւ իւր խոնջացած անդամներին։ Մորփէոսը իւր թևերը տարածելով նրա վրայ, մի այնպիսի անուշ քուն պարգևեց օտարականին,

որ ներքև՝ իւր տակի չոր գետինը և վերև՝ բացօդեայ երկինքը նրան թւում էր՝ թէ իւր ապարանքում, իւր փափուկ մահճակալի վրայ, իւր մետաքսեայ անկողնումն է պառկած։

Խորին լռութիւնն ամեն տեղ տիրել էր։ Լուսինն իւր միահեծան թագաւորութեան մէջ էր։ Նա բակ բոլորած՝ իւր խորհրդաւոր շրջանն էր կատարում և ամեն չար ու բարու միակ ականատեսը նա էր։

Ահա և այդը։ Վաղ արշալոյսին, երբ Ադամայ մութն ու լոյսը դեռ իրարուց չէին բաժանուել, երբ աշխարհի չարն ու բարին դեռ իրար հետ կռւում էին, երբ հորիզոնի արևելեան կողմը կարմիր քրքումի գոյն էր ստացել և բոցավառուած՝ իւր հետ այրում ու կրակ էր դարձնում և այն կտոր-կտոր ամպերին, որոնք տեղ-տեղ երևում էին այդտեղ երկնքի վրայ, —ահա այդ պահուն, առաւօտեան արշալուսի այդ շաղաթաթախ ժամին՝ երգեցիկ թռչուններն իրենց նուագածութիւններն էին սարքել։ Հէնց այդ ժամին՝ մեր անծանօթի ականջին մի քաղցր ծլլոց հասաւ, այդ ծլլոցն այնքան ախորժելի, այնքան հրապուրիչ էր, որ կարծես դիւթում և աւելի ծանրացնում էր նրա աչքերի կոպերը։ Այդ սիրահար սոխակի սրտակէզ մորմոքներն ու մրմունջներն էին, որ այժմ եր-

կնքի այդ ծանր երկունքը տեսնելով աւելի ևս ոգևորուել էր և իւր վարդի քնքոյշ կոկոնիկի երկունքից ազատուելուն համար՝ իւր սրտաշարժ տաղերն էր նուագում, որ իւր վարդը բացուի, որ իւր թշիկը կանաչ ծածկոցի տակից հանէ, իրեն մի ցոյց տայ... Մերթ կկլլացնում էր յուսահատ խեղդուող ձայնով, մերթ հոգոց ու հառաչանքներ արձակում, մերթ խրախուսիչ քաղցրիկ դայլայլիկներ, սիրալիր մեղեդիներ, ոգևորիչ տաղեր, և ահա կարծես նրան թւում էր, թէ վարդը, իւր սիրուն վարդը, նոր զարդարանքներով պճնուած, սիրուն հարսի պէս՝ քիչ հեռուն կանգնած, ձեռքը կարմիր այտերին դրած՝ հրաւիրում էր նրան, իւր սիրամորմոք սոխակին՝ քնքուշիկ համբուրիկ առնել, իւր տապացած սրտին քանի մի կաթիլ երկնային անուշահոտ ցող կաթեցնել, այդ ցողը, այդ արցունքը որպէս բուժիչ բալասան՝ դնել իւր կրակած սրտին։ Բայց սոխակն այրւում, տոչորւում էր և նրա սէրը, նրա հրաբորբոք ու հրատապ սէրը չէր կարողանում յագենալ, զովանալ...

Փչում էր առաւօտեան անուշ հովը. քաղցրաշունչ զեփիւռը սրսրալով անցաւ նրա գլխի վրայով, շարժելով նրա մաղերը։

Ահա այդ ժամին աչքերը բաց արեց մեր օտարականը։ Հեռուից նրա ականջին հասնող

սոխակի մեղեդիները, վարդի սիրով վառուած նրա տաղերն օտարականի մէջ տխուր յիշողութիւններ զարթեցրին և նրա աչքերից արտասուքի հեղեղներ սկսեցին հոսեցնել։ Խեղճ օտարական։ Նա յիշեց իւր անցեալը, յիշեց, թէ ինչպէս ինքը ևս անբաղդ սոխակի նման, գիշեր-ցերեկ իւր սիրահարի, իւր բարեպաշտուհու գովքն էր երգում. նրա սիրով այրւում, տոչորւում, թէ որքան աղօթքներ, քանի-քանի մաղթանքներ է կարդացել նա դէպի վերև, դէպի երկնքի այդ անհուն բարձրութիւնը, դէպի այնտեղ՝ աստղերի, արեգակի և բարձրբարձր լուսատուների թագաւորութիւնը, ուր նրանցից էլ աւելի բարձր՝ Ամենաբարձրեալն էր նստած, մինչև որ հասաւ նա իւր բաղձանքին, իւր չնաշխարհիկ նազելուին։ Բայց մարդ, վարդ, ահ, որքան տարբեր են միմեանցից։ Մէկը փչերով պատած, որպէս ամուր պարիսպներ, որպէս քաջ ու արթուն պահապաններ, բայց անարատ, մաքուր, ուր ներս թափանցել չեն կարողանում պիղծ ոգին, չարանենգ ու խարդախ սէրը, այլ միայն սոխակի սուրբ ու անբիծ սէրը, նրա քնքոյշ խանդաղատանքը։ Մէկը—անփուչ, բայ, հարիւրաւոր հովերի ազդեցութեան տակ տարուբերուող սիրտ, անմաքուր ու արատաւոր սէր, կոպիտ ու անտաշ հրապու-

1007/32477

բանը։ Վարդ՝ անկեղծ, մարդ՝ ամեն ինչ կեղծ։

Օտարականը յիշեց այդ բոլորը։ Իսկ այժմ... այժմ ամեն ինչ անդառնալի կորած է՝ և՝ սէրը, և՝ յոյսը, և՝ հաւատը, և սիրտն ու հոգին, խաբուսիկ ցնորքներ, խաբուսիկ երեւակայութիւններ... Այժմ,— օտար հողի չոր, կոշտացած դետնի վրայ պառկած, օտար աստղերի, օտար երկնքի տակ միայն իւր վաստակած մարմնին, իւր տանջուած հոգուն, իւր փոշոտուած դէմքին, իւր հիւծուած, մաշուած ու չարչարուած սրտին հանգիստ էր տալիս։

Նա նորից յիշեց սոխակի երգը, և նրա սիրտը լցուեցաւ, սկսեց բարձրանալ, ուռչիլ, խեղդել նրա կոկորդը և յանկարծ փլձկեց, և յորդահոս արցունքները նորից դուրս ցայտեցին նրա աչքերից... և խեղճ անծանօթն ընկաւ ինքնամոռացութեան մէջ և քաղցր տեսիլներ ու անուրջներ տիրեցին նրան։ Եւ ահա նրա աչքի առաջ պատկերացաւ մի հրաշագեղ կոյս, ծնկաչոր, աչքերը դէպ երկինք ուղղուած՝ աղօթք էր մրմնջում։ Նայում է, նայում է անթարթ, մինչև որ չքացաւ պատկերը։ Բայց ահա նորից նոր պատկեր։ Ձրեղ դահաւորակի վրայ բազմած է նոյն չքնաղ կոյսը. մարմար կուրծքը բաց և իւր բամբականման փափուկ հոլանի կոնները տարածած՝ գրկել էր մի դանդրա-

հեր երիտասարդի... ահա մի սիրատոչոր համբոյր, համբոյր նենգաւոր... և մի ուրուական, մի զարհուրելի ուրուական նրան հանգիստ չէր տալիս, նրան հալածում էր փախչել հեռու, աւելի հեռու երկիրներ։ Օտարականը ցնցուեց, յանկարծակի տեղից կանգնելով՝ ուզեց փախչիլ այդ ուրուականի ազդեցութիւնից, բայց անուրջների յոգնածութիւնից և հոգեկան տանջանքից իսպառ թուլացած՝ նորից ընկաւ գետնին, սկսեց լալ, անվերջ լալ...։

Դ

Վերջապէս սթափուեցաւ օտարականը, բարձրացաւ տեղից։ Արեգակն արդէն դուրս էր եկել և երկնքի վրայ բաւական ճանապարհ էր կտրել։ Անց ու դարձն ամեն ուրեք սկսուել էր։ Բայց այս ինչ շշուկ, այս ինչ փսփսոց ու իրարանցում է տիրում շուրջը։ Քանի գնում է, շշուկներն աւելի են բարձրանում, աղաղակներ դառնում։ Ամենքը վազում են դէպի քաղաքի յայտնի փողոցներից մէկը։

—Ի՞նչ է պատահել, բարեկամ, այդպէս շտապով ինչու՞ ես վազում,—ասում է քաղաքացիներից մինը իւր ծանօթին։

—Մի՞թէ դեռ չես լսել, որ այս գիշեր Ս.

աղայի խանութը կտրել են, նրա միջի արծաթեղէն ու ոսկեղէն իրեղէնները, փող, մեծ հարստութիւն տարել։

Եւ երկու ծանօթներն իրենց քայլերն ուղղեցին և շտապեցին դէպի եղելութեան վայրը։

Զայնը հասաւ թագաւորին։

—Դարձեալ գողութիւն,—մտածում է թագաւորը.—այս որքան շատացան գողութիւններն այս վերջին տարիներում։

Եւ զարմանալին այն էր, որ այդ բոլոր գողութիւններն էլ անյայտ էին մնում։ Թագաւորին ոչ մի կերպ չէր յաջողւում չարագործների հետքը գտնել տալ։ Մանաւանդ վերջերքում քաղաքի ամենայայտնի մարդկանց պատահած այդ դժբաղդութիւնները թագաւորի սիրտը խոր խոցեցին։ Բայց երբ լսեց, որ այս վերջին կողոպտուած խանութը իւր բարեկամ ու սիրելի Ս. աղային էր պատկանում, աւելի ևս սրտմտեց։ Ուստի կանչել տուաւ քաղաքի բոլոր ոստիկաններին ու թաղապետներին և սաստիկ հրաման արձակեց, որ եթէ նրանք մինչև երեք օրը յանցաւորներին չգտնեն, նրանց ամենքին էլ սաստիկ պատիժներ պիտի տայ, ոմանց հեռաւոր աքսորավայր աքսոր ուղարկելով, ոմանց կախաղան բարձրացնել տալով։

Քաղաքը նորից վարանման մէջ ընկաւ։

Յուսահատութիւնը տիրել էր բոլոր ոստիկաններին ու թաղապետներին։ Նրանք մնացել էին մոլորուած. ինչ անէին, ում օձիրից կենային, ում վրայ կասկածէին. իրենց քաղաքում այդպիսի կասկածաւոր մարդիկ չէին ճանաչում։ Էլ տեղ չմնաց, էլ աւերակ տներ քաղաքի շուրջը, սահմաններում, էլ գնացող, եկող, էլ բարեկամ, ծանօթ, անծանօթ չմնաց, որ չհարցընէին, չհետախուզէին։ Բայց ի զուր աշխատանք։ Չարագործներին չկարողացան բռնել։

Եւ արևելեան սնոտիապաշտ ու անհաւատ այդ քաղաքում զանազան առասպելներ տարածուեցան, որ իբր այդ գողերը մարդիկ լինել չեն կարող, այլ միայն քաջքեր, դևեր, սատանաներ. այլապէս նրանք չէին կարող իրենց այդքան խիստ հետապնդումներից խուսափել։ Եւ պատրաստւում էին այդ առթիւ դեկուցումն անել թագաւորին, թէ քաջքերին բռնելու համար իրենց մարդկային ոյժն ու հետազօտութիւնը շատ անզօր է։

Ը

Վերջին օրն է։ Արևդակը վաղուց էր մայր մտել։ Ամենքը քաշուել էին իրենց բնակարանները, անց ու դարձ չկայ։ Քաղաքը, կարծես,

նորից ամայացել էր։ Մօտ կէս գիշեր էր։ Քաղաքապահներից մինը, վաղուայ օրհասական ժամի մասին մտածելով մտամոլոր, անյոյս անցնում էր քաղաքի փողոցներից մէկով։ Նրանից ոչ հեռու, փողոցի անկիւններից մէկի պատի տակ նա լուսնի լուսով մի ստուեր նկատեց և քայլերն ուղղեց դէպի այդ կողմը։ Նրա սիրտը մի կերպ տրոփում էր ուրախութիւնից, գուշակելով իւր համար մի բարիք։ Ո՞վ կարող էր լինել այդ մարդը, եթէ ոչ գող ու աւազակ։ Եւ քաղաքապահը իւր մտքումը դրական որոշումն կայացնելով՝ մօտեցաւ այն ստուերին։ Նա խոր քնած էր։ Երեսի դէմքը, շորերի ձևն իրեն անծանօթ։ Նա իրենց երկրացի չէր։ «Սա սատանայ կը լինի մարդու կերպարանքով»,—մտածում էր քաղաքապահը, «բայց ո՞վ և լինի, անշուշտ Ս. աղայի խանութի կտրոնն է սա»։

—Է՜յ, ո՞վ ես, զարմնիր,—ասաց քաղաքապահը։

Խեղճ անծանօթն անսովոր շարժումներ էր անում։ Նա կարծես երազում լինէր, և առաւօտեան արշալուսին սոխակի երգը և իւր անցեալ կեանքի վաղանցուկ փառքը նրան գիշերը ևս հանգստութիւն չէին տալիս։ Հիւանդ մարդու նման կարծես՝ զառանցում էր։ Եւ նրան թւում էր, որ շատ խոր, խոր անդունդից մի ձայն էր հասնում ականջին։ Նա կամենում էր պատասխանել, բայց ձայնը խեղդւում էր, ղըլղըլցնում կոկորդում և այդպէս մարում էր։

—Է՜յ, վեր կաց, ո՞վ ես,—կրկնեց քաղաքապահի ձայնն աւելի բարձր։

Օտարականն աչքերը բաց արեց և իւր առջևը մի սպառազինուած մարդ տեսնելով՝ սարսափից իսկոյն ոտքի կանգնեց և անթարթ աչքերով նայում էր նրան։

—Ի՞նչ մարդ ես դու, հարցրեց քաղաքապահը երրորդ անգամ։

Օտարականն սթափուեցաւ և իւր բոլոր ոյժը ժողովելով՝ պատասխանեց։

—Մի խեղճ անծանօթ օտարական եմ, ընկել եմ այս քաղաքը, ոչ որ ծանօթ չունեմ, գիշերելու տեղ չեմ ճանաչում, և ահա այս երրորդ օրն է, որ այս խուլ փողոցի անկիւնում այսպէս կուչ եկած՝ անց եմ կացնում գիշերուայ հանգստութիւնս։

—Շատ բարի, ես քեզ գիշերելու լաւ տեղ ցոյց կը տամ, հետևիր ինձ,—ասաց քաղաքապահը և քայլերն ուղղեց դէպի ոստիկանատուն։ Օտարականը, այդ մեր ծանօթ բաղդահալածեալը, իւր գլխին գալիք չարագուշակ նոր դէպքեր նախատեսելով՝ մտատանջ հետևեց քաղաքապահին։

Զ

Հետևեալ առաւօտ ոստիկանատան առաջ մի խումբ ոստիկաններ ու քաղաքապահներ բոլորուած՝ տաք տաք խօսում էին և ուրախ-ուրախ ծիծաղում։ Նրանցից իւրաքանչիւրը իւր հետաքրքրութեանը բաւականութիւն տալու համար՝ զանազան հարցեր էր առաջարկում մեր ծանօթ քաղաքապահին։

—Թագաւորը քեզ մեծամեծ պարգևների կարժանացնէ,—ասաց նրանցից մէկը։ Երանի՜ քեզ, մենք միայն սեերես մնացինք։

—Իսկ դու մոռանում ես յիշել, որ Աստուած ինձ հետ ձեզ ամենրիդ էլ կախաղանից ազատեց։ Չէ՞ որ, եթէ այս աւազակը չրոնուէր, վաղը մեր ամենքի վերջին ժամը պիտի հնչէր։

Վերջին խօսքերն արտասանելիս՝ ամենքի մարմնով մի տեսակ սարսուռ անցաւ։ Ամենքն ուրախ էին, որ ազատուեցան անակնկալ մահից։

Գողին ձերբակալելու լուրն արդէն պաշտօնապէս զեկուցել էին Թագաւորին։ Շուտով հասաւ Թագաւորի հրամանը բանտապետին, որ գողին ատեան բերէ հարց ու փորձի ենթարկելու։

Մի՛ւս օրը կարծեցեալ գողին տանում էին

Թագաւորի ապարանքը։ Ժողովուրդը շրջապատել էր նրան և նրա յետևից ու առջևից գնալով՝ կազմել էր մի կանոնաւոր թափոր։ Հատ չանցած՝ այդ թափորը կանգ առաւ Թագաւորի պալատի առաջ։ Բանտարկեալին ներս տարան ատեան և կանգնեցրին։ Թագաւորը իւր պալատականներով նստած էր իւր պատշաճաւոր տեղը։

—Ո՞րտեղացի ես։ Ինչպէս ընկար այս երկիրը։ Ինչպէս ես համարձակուել այդքան չարագործութիւններ անել,—տեղում էին Թագաւորի հարցերը կարկտի պէս։—Խոստովանիր ամենը ճշտօրէն, օրհասդ մօտեցած է արդէն։ Դահիճ,—հնչեց Թագաւորի ահեղ ձայնը։

Իսկոյն յայտնուեցաւ մի երկարահասակ, դաժան դէմքով, չորացած մարդ, որից ցլուխ կարմիր հագած։ Նա մի մեծ կեռ թուր պատեանից հանած, ձեռքին բռնած, խոր գլուխ տալով՝ կանգնեց Թագաւորի առաջ։

—Խոստովանիր բոլոր չարագործութիւններդ,—ասաց Թագաւորը բանտարկեալին։

—Տէ՛ր Թագաւոր, որպէս բաղդից հալածուած մի օտարական՝ ապաստանել եմ այս քաղաքը իմ վշտերին մոռացումն տալու համար։ Կէս գիշերին այս մարդը (մատնացոյց անելով քաղաքապահի վրայ) ինձ քնից զարթեցրեց և

բանտարկել տուաւ, թէ որ յանցանքիս համար չգիտեմ։

—Ի՞նչպէս անմեղ է ձեանում. մի՞թէ դու չես այն խանուլթ կտրողը, այն գողը, որն այդքան չարագործութիւններ կարողանում է ճարպիկութեամբ գործել և որին այնքան հետամուտ լինելով՝ վերջապէս յաջողուել է բռնել։—Դահիճ, պատրաստուիր թռցնելու այս յանդուգն մարդու գլուխը,—որոտաց թագաւորի ձայնը։

—Տէր թագաւոր, երդւում եմ Ամենակալի անունով, որ ես այդ գողութեան մասին ոչինչ տեղեկութիւն չունիմ։ Խնայիր ինձ, ես անմեղ եմ, ես յանցանք չունիմ։ Առանց այդ էլ ես շատ տանջուած ու չարչարուած եմ։ Մի՞թէ թոյլ կըտայ Աստուծոյ ընտրեալն առանց որևէ փաստի գլխատել տալ մի անմեղ մարդու։ Երկի՞նք, գետի՞նք, ես գող չեմ, ես չեմ կտրել խանուլթը, խղճա՛ ինձ։ Թէև իմ կեանքը միանգամայն անտանելի է դարձած ինձ, թէև մահն այսօր աւելի գերագասելի է կեանքիցս, սակայն չէի ցանկանալ մեռնել որպէս գող, որպէս չարագործ։

Բայց թագաւորի հրամանն անդառնալի էր։

Տեսնելով որ ազատուելու հնար չկայ, մեր անծանօթը փորձեց վերջին ճիգն ևս անել, գէթ մի քանի օր ևս վաստակել ապրել։

—Տէր թագաւոր, վերջին խնդիրք ևս ունիմ։ Տուր ինձ երեք օր ժամանակ գողին որոնելու համար։ Իմ կեանքը միշտ քո ձեռին է. երեք օրից յետոյ ևս կարող ես ի կատար ածել հրամանդ։

—Ընդունում է քեզ խնդրածդ ժամանակամիջոցը.—ասաց թագաւորը և հրամայեց ազատել նրան կապանքից ու ազատ թողնել։

Է

Պայմանաժամի վերջին օրն է։ Օտարականը տխուր, տրտում շրջում էր քաղաքի փողոցները։ Ինքն ևս լաւ գիտէր, որ իւր ոյժերն անզօր են գողերին գտնելու համար։ Եւ ի՞նչպէս կարող էր. քաղաքն իւր համար օտար, մարդիկն անծանօթ։ Դառնութեան բաժակը լցուել էր։

Ցոյսը կտրած ամենրից՝ վերջը դիմեց Աստուծոյ օգնութեան։ Երրորդ օրն է և իւր համար կեանքի վերջին օրը։ Վաղը, մտածում էր, վերջ կըտրուի իւր այդքան չարատանջ կեանքին։ Բայց ուրախ էր, որ անմեղ է ինքը։ Օտարականը կամեցաւ վերջին անգամ տաճար գնալ, վերջին անգամ Աստուծուն աղօթել։

Մտաւ տաճար։ Աղօթողների մեծ բազմութիւն կար արդէն։ Օտարականը հետաքրքրութիւնից աչքերն անընդհատ այս ու այն կողմն

էր դարձնում. երբեմն յառում առաստաղին, երբեմն պատերին, երբեմն աղօթող բազմութեան։ Ամենքը խորին երկիւղածութեամբ աղօթում էին։ Ինքն ևս հետեց նրանց օրինակին։ Ինքն ևս իւր սրտի խորքում, լուռ, անձայն, ջերմաջերմ աղօթում էր Աստուծուն՝ վաղուայ մահուան դառն բաժակն անցկացնել իրենից։

Բայց ահա նրա աչքերը կանգ առան մի աղօթողի վրայ, որ հէնց ինքն ըստ ինքեան աչքի էր զարնում։ Նա միջահասակ, թխադէմ, սև ու խուճուճ մազերով, հաստ ու կարճ պարանոցով մի մարդ էր։ Հագնուած էր բաւական շքեղ կերպով։ Աղօթում էր նա... մերթ ծընրադրում, երեսը գետնին էր քսում, հողը լիզում, մերթ կանգնում և երկու ձեռքը բարձր կարկառած, աչքերը երկինք զցած, բարձրաձայն աղօթք էր մրմնջում, մերթ կուրծքն էր ծեծում և աղիողորմ բացականչութիւններ անում, լալիս, հեծկլտում, խոր հառաչներ արձակում. և այնպէս անընդհատ...

Օտարականը հայեացքը դարձնում է մի այլ կողմ։ Եւ ահա տաճարի մի ուրիշ անկիւնում մի այլ մարդ է աղօթում դարձեալ նոյն ձևով, նոյն շարժումներով, նոյն աղիողորմ լացն ու կոծը, նոյն հառաչանքն ու հեծկլտանքը։

Օտարականի հայեացքը գրաւում են այժմ երկու այլ մարդիկ, որոնք տաճարի երրորդ ու չորրորդ անկիւններում առանձին առանձին կանգնած՝ նոյն ձևով աղօթում էին։ Եւ աղօթող բազմութիւնը քաղցր ժպիտով և մի տեսակ խորին ակնածութեամբ նայում էր այդ չորս աղօթողներին։

Դժբաղդ օտարականն սկսեց ուշադրութեամբ զննել նրանց չորսին էլ, չափել նրանց ոտից ցգլուխ՝ նրանց դէմքերը, նրանց հագուստները, նրանց ամեն մի շարժումը։

Աղօթելու աւարտման ժամը հասաւ։ Բազմութիւնը հետզհետէ դուրս էր գալիս տաճարից։ Օտարականն էլ դուրս եկաւ և կանգնեց մեծ դարբասի առաջ, ուր շարիշար կանգնած էին բազմաթիւ աղքատներ, կոյրեր, խեղճեր և նրանց հաստավիզ, առողջ կարմրերես առաջնորդ-ուղեկիցները։ Ահա դուրս եկան և այն չորս բարեպաշտ աղօթողներն ու իրենց քսակի բերանը լայն բացած՝ աջ ու ձախ առատ ողորմութիւններ բաշխելով խառնուեցան խուռն բազմութեան հետ և հեռացան սրբավայրից դէպի իրենց տները։

Աղքատներն էլ օրհնութիւն չմնաց, որ չթափէին նրանց գլխին։ Օրհնում էին նրանց բարեպաշտութիւնը, նրանց ողորմածութիւնը,

տունը, տեղը, որդիքը...։ Իսկ խուռն բազմութիւնը ձայնակցում էր նրանց՝ «ամէն, ամէն» կրկնելով։ Որտեղով անցնում էին նրանք, ամենքը նրանց ճանապարհ էին բաց անում, առաջին գնալը, առաջ անցնելը նրանց էին առաջարկում և նրանց իւրաքանչիւր առաջարկած հարցին երկիւղածութեամբ, որդիական հնազանդութեամբ էին պատասխանում։

—Բարեկամ, ներեցէք հետաքրքրութեանս, բարի եղէք հաղորդել ինձ, թէ ովքե՞ր են արդեօք այդ մարդիկը, որոնց ժողովուրդն այդչափ սիրալիր յարգանքներ է մատուցանում։

—Դրանք մեր քաղաքի բարեպաշտներն են, մեր քաղաքի բարերարները, աղքատների հայր, այրիների հոգաբար, թագաւորի և իշխանների սիրելիներն են. ժողովուրդը պաշտում է դրանց։

Եւ այդ խօսակիցը, օտարականի խնդրանօք, մի առ մի յայտնեց նրանց իւրաքանչիւրի անունն ու ազգանունը և նրանց բնակարանների տեղը։

Այդ գիշեր մեր թշուառ օտարականը բաւական խաղաղ ու հանգիստ քուն ունեցաւ։

Ը

Առաւօտեան վաղ զարթնեց օտարականը։ Նրա սիրտն այժմ բոլորովին խաղաղ էր։ Չորրորդ օրն է։ Ցիշեց, որ պէտք է ներկայանար թագաւորի Ատեանին իւր զեկուցումը տալու, ուր իրեն կամ կեանք, կամ մահ էր սպառնում։ Եւ նա քայլերն ուղղեց դէպի թագաւորի պալատը։

Օտարականի գալը զեկուցին թագաւորին։ Թագաւորը հրամայեց ներս կանչել նրան իւր մօտ։

Պալատական նազիր-վէզիրներն արդէն ժողովուած՝ ատեան էին կազմել։ Թագաւորը նստած էր իւր գահի վրայ։ Ներս մտաւ օտարականը և չոքեց թագաւորի առաջ։ Նրա ձեռները դողդողում էին։

—Տէր արքայ,—ասաց դողդոջուն ձայնով,—գտայ գողերին։

Եւ յայտնեց նրանց ով լինելը, յականէ յանուանէ կոչելով նրանց իւրաքանչիւրին, ինչպէս տեղեկացել էր արդէն։

—Ի՞նչպէս. համարձակում ես ստուեր ձգել իմ սիրելի, բարեպաշտ և հաւատարիմ մարդկանց վրայ,—գոչեց թագաւորը խիստ բարկացած։—Գիտենաս, որ կախաղանն այդպիսի յանդուգն ու լիրը զրպարտութեան համար շատ թեթև պատիժ է։

Ապա դառնալով դահճապետին հրամայեց.

—Դահճապետ, մաս-մաս կտրատիր սրան։

Մինչդեռ դահճապետը մոտենում էր օտարականին, վերջինս ծունկ խոնարհած թագաւորի առաջ, վճռապէս ու հաստատօրէն պնդում ու կրկնում էր ասածները։

—Տէր թագաւոր, հաճեցէք ձերբակալել նրանց, հետախուզել նրանց բնակարանները և կըտեսնէք, որ իմ ասածը ճշմարիտ է։ Իմ գլուխը միշտ ձեզ է պատկանում։ Աղաչում եմ, գէթ փորձի համար հրամայեցէք ձերբակալել նրանց։

Թագաւորը երկար տատանուելուց յետոյ հրաման արձակեց շրջ բարեպաշտներին ձերբակալել և նրանց բնակարանները մանրազննին խուզարկել։

Խուլ շշուկ տարածուեցաւ ամբողջ քաղաքում. ամենքը մնացել էին ապշած, ամենքի շրթունքներից էլ զարմանքի խօսքեր էին դուրս թռչում և կասկածոտ հայեացքներով իրար հարցընում. «Մի՞թէ, մի՞թէ, մեր բարեպաշտները... տէր Աստուած, այդ ինչպէս կարելի է...»։ Շատերը մինչև անգամ այնքան զայրացած էին, որ եթէ իրենց ձեռքն ընկնէր իրենց բարերարներին զրպարտողը, մաս մաս կանէին նրան։

Սակայն թագաւորի հրամանն անողոք ու անդառնալի էր։ Չարագործներին իսկոյն և եթ ձերբակալելով՝ շրթայակապ տարան թագաւորի Ատեանը։

Առաջին իսկ վայրկեանից, երբ բարեպաշտների ու թագաւորի հայեացքներն իրար հանդիպեցան, երբ թագաւորն իւր առաջ տեսաւ նոյն գլխակոր, նոյն հեզ ու խոնարհ դէմքերը, նոյն տժգոյն երեսները, առաջին իսկ վայրկեանից, այո, թագաւորի սրտում բորբոքուեցաւ կարեկցութեան բոցը. նրանց շղթայակապ դրութիւնը, նրանց արտաքին տեսքն ու կերպարանքը սաստիկ ազդեցին թագաւորին. մէկ միտք յղացաւ արձակել նրանց, բայց իւր տխրութիւնը զսպելով՝ դիմեց կալանաւորներին։

—Աղաներս, իմ քաղաքի բարեպաշտներ, խոստովանեցէք ձեր յանցանքները, խոստովանեցէք, որ դուք էք եղել այս քաղաքի գողերը, որ ձեր ձեռքով է կատարուել Ս. աղայի խանութի կողոպուտը և այն ամեն գաղտնի չարագործութիւնները, որոնք պատահել են քաղաքումս և որոնք մինչև այնքան արագ ծածկւում անյայտութեան անդունդն էին գլորւում։ Կայ մէկը, որ ճանաչել է ձեզ և ամբաստանել։ Խօսեցէք ճշմարիտը։

Չարագործների հայեացքներն իրար հանդիպեցան։ Կասկած ու տարակուսանք էր արտայայտում այդ հայեացքը. «Ո՞վ իմացաւ, կամ ո՞վ կարող էր տեսնել նրանց արարմունքը, ինչպէս են ճանաչել իրենց»—ահա հարցեր, որոնց

գրական պատասխան տալ դժուարանում էին նրանք։

Դարձեալ իրար մէջ հայեացքներ փոխանակեցին։ Այս անգամ նրանց ամենքի աչքերի վերին կոպերը ներքև խոնարհուեցան։ Այդ իրար մէջ համաձայնութիւն կայացնելու նշանն էր։

Երրորդ անգամ հայեացքներ փոխանակելուց յետոյ, նրանցից մէկը, որ ամենքից տարիքաւորն էր, ծունկ խոնարհուեց թագաւորի առաջ։ Նրան հետևեցին միւսները։

—Ներիր, տէր արքայ, ներիր քո ծառաներին. մենք մեղաւոր ենք. մենք այժմ քո ըստրուկներն ենք։ Խոստովանում ենք հրապարակաւ մեր յանցանքները. մենք չնչին արարածներ ենք։ Մենք ենք այն անպիտանները, որոնց ձեռքով կատարուել են քաղաքումս տեղի ունեցած բոլոր գողութիւնները։ Խղճա մեզ, գթա մեզ վրայ։

Մինչդեռ նրանք խոստովանում էին իրենց յանցանքները, խուզարկուները վերադարձան և մի առ մի պատմեցին, որ բոլոր գողացուած իրեղէնները, նոյնպէս Ս. աղայի խանութի բոլոր կողոպուտը գտնուում են այդ չորս անձերի ստորերկրեայ առանձին պահեստներում։

Բարեպաշտների խոստովանութիւնը մեծ իրարանցումն յառաջ բերեց։ Ամբոխը քարացած էր մնացել։ Թագաւորի և պալատականների դէմքերն ապուշի արտայայտութիւն էին կրում։ Ամենքի մարմնով մի տեսակ սարսուռ անցաւ։ «Ի՞նչպէս, այս բարեպաշտները չարագործնե՞ր, գողե՞ր... Եւ մինչև հիմա մեզ յիմարացրել են իրենց արտաքին բարեպաշտական ձևերով.., Տէ՛ր Աստուած, հաւատանք արդեօք մեր ականջներին, մեր աչքերին...

Եւ ամբոխը կարծես մի ձայն, մի բերան դարձած՝ միաբերան մի աղաղակ բարձրացրեց.

—Մա՜հ չարագործներին... թող կորչին կեղծ բարեպաշտները...։

—Օտարականն,—որոտաց թագաւորի ահեղ ու հրամայողական ձայնը,—դուրս եկ կանգնիր ատեանի առաջ։

Օտարականն աներկիւղ և վստահ քայլերով առաջ անցաւ և խոր գլուխ իջեցնելով թագաւորին՝ կանգնեց։

—Պատմիր՝ թէ ինչպէս ճանաչեցիր և ինչպէս գտար դու սրանց, որոնք իրենց ճարպիկութեամբ այսքան երկար խուսափել են մեր աչքերից։

—Տէ՛ր արքայ, դրա պատմութիւնը շատ երկար է, բայց ես կաշխատեմ շատ համառօտել։

Եւ օտարականը մի առ մի պատմեց իւր գլխին եկած դէպքը, իւր բարեպաշտուհու, իւր

հարսնացուի ընտանեկան կեանքը բոլոր մանրամասնութեամբ, նրա ջերմագին աղօթքները, նրա աստուածպաշտութիւնը, նրա հետ ամուսնանալու պայմանները, ամուսնութիւնը, նրա աղօթքի պատրուակով առանձնարան ապարանքում կատարած անառակութիւնները և վերջապէս իւր կեանքից ձեռք վերցնելն ու պանդխտութեան ցուպը ձեռքն առնելը...։

—Երբ ես,—այսպէս վերջացրեց օտարականը,—պայմանաժամիս վերջին օրը, վերջին անգամ կամեցայ տաճար մտնել, աղօթել Աստծուն, ահա այդ ժամանակ իմ աչքով ընկան այս չորս մարդիկը, որոնց ամբողջ քաղաքը բարեպաշտի մեծ անունն է յատկացրել։ Երբ տեսայ սրանց տարօրինակ աղօթելու ձևերը, սրանց լացն ու կոծը, սրանց սրտից դուրս արձակուող հառաչանքները, սրանց կուրծք ծեծելը, սրանց հեծկլտանքը, սրանց հող լիզելը, սրանց... բայց որ մէկը թուեմ,—իսկոյն յիշեցի իմ բարեպաշտուհուն, իմ անառակ կնոջը և մտքումս ասացի՝—«Սրանք իմ անառակ կնոջ ցեղիցն են, սրանք պէտք է լինին գողերը»։ Մնացածն արդէն յայտնի է քեզ։

Թ.

Հետևեալ օրը քաղաքի լայն հրապարակի վրայ չորս տեղ կախաղանի սիներ էին կանգնեցրել։ Իւրաքանչիւրից մի-մի պարան կախուած և իւրաքանչիւրի տակ մի-մի փոս փորուած փոսերի ծայրերին դրած էր մի-մի ախոռ, որոնց մօտ կանգնած էին մի-մի դահիճ՝ կարմիր բաճկոնակ հագած։ Քաղաքի համարեա ամբողջ բնակչութիւնը խռնուած էր այդտեղ։ Ներկայ էր և թագաւորը իւր պալատականներով։

Պահապան զինուորները չորս շղթայակապ բանտարկեալ էին բերում այդ հրապարակը։ Ամենքի աչքերը հետաքրքրութեամբ նայում էին դէպի այն կողմը։ Ամենքն ուրախ էին, որ այդ բարեպաշտական կեղեի տակ ծածկուած չարագործութիւնը յայտնի եղաւ և պիտի պատժուի։

Վերջապէս գողերին հրապարակ բերին և իւրաքանչիւրին իւր որոշեալ տեղը կանգնեցրին։ Ի լուր խուռն բազմութեան կարդացին յանցաւորների մահուան դատավճիռները։ Այնուհետև հագցրին նրանց մի-մի սպիտակ երկար շապիկ։ Դահիճներից իւրաքանչիւրը մօտենալով իւր զոհին՝ պարանների ոլորած ծայրերն

անցկացրին նրանց վզերը և ոտքերի տակից դուրս քաշեցին աթոռները։

Հանդիսատես բազմութեան առաջ նոր տեսարան պատկերացաւ... Չորս սպիտակ մարմիններ ճօճւում էին, որպէս ճախարակ, օդի մէջ։ Մի քանի վայրկեան, և ահա իւրաքանչիւրը նրանցից սկսեց այնպիսի ցնցումներ գործել, այնպէս կծկուել, որ տեսնողին սոսկումն էր պատճառում։ Փափկասիրտ կանայք և թուլամորմ մարդիկ չկարողացան տանել այդ տխուր տեսարանը. նրանք շրջեցին իրենց երեսները, որ չտեսնեն այդ զարհուրելի պատկերները։ Շատերը լալիս էին, շատերն էլ խսկոյն ևեթ թողին պատժավայրը և շտապով հեռացան, բայց նրանցից շատերին, դեռ շատ երկար միջոց, նոյն պատկերները, որպէս ուրուականներ, երևում էին գիշերները երազներում և նորից այն ահռելի տեսիլները պատկերանում նրանց յիշողութեան մէջ ու նոր ի նորոյ սոսկում և ահաբեկում նրանց սրտերը։

Մի քանի վայրկեան ևս... և դադարեց ամեն մի ցնցումն, և սպիտակ մարմիններից իւրաքանչիւրն ուղղաձիգ կախուեցաւ կախաղանների սիւներից։ Մօտեցան դահիճները սուր ի ձեռին և կտրեցին իւրաքանչիւրի պարանը։

Անշնչացած դիակները, թրջմբոց բարձրացնելով, ընկան փորուած խորխորատները։

Ժողովուրդը տխուր և յուզուած սրտով հեռացաւ այդ պատժավայրից։

—∞—

Միւս օրը թագաւորի մունետիկը քաղաքի իւրաքանչիւր հրապարակի վրայ կանգնելով թագաւորի կամքն էր յայտնում ժողովուրդին, որ օտարականին թագաւորը կարգել է իրեն մեծ խորհրդական։



ՀԱՅ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
Գրադարան
ՀԱՅԿ ... ՀԱՅԿ
ՀԱՅԿ ... ՀԱՅԿ
Ա. Ա. Մասիսյան
ՀԱՅԿ ... ՀԱՅԿ